



ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հոդվածի հղումը. Արզարյան Ի. (2023), Մասնագիտական օտարալեզու տեքստերի վրա աշխատանքի արդի մոտեցումները ոչ լեզվաբանական մասնագիտությունների խմբերում, Տնտեսություն և հասարակություն, ՀՊՏՀ, Տնտեսագետ, 1(1), 141-155, DOI: 10.52174/29538114_2023.1-138


Ներկայացվել է խմբագրություն՝ 20.03.2023 թ.

Ուղարկվել է գրախոսության՝ 22.05.2023 թ.

Երաշխավորվել է հրատարակման՝ 18.07.2023 թ.

ԻԶԱԲԵԼԼԱ ԱՐԳԱՐՅԱՆ

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի ասիստենտ

 <https://orcid.org/0009-0001-5419-9217>

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ՏԵՔՍՏԵՐԻ ՎՐԱ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՐԴԻ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՈՉ ԼԵԶՎԱԲԱՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՄԲԵՐՈՒՄ

Որպես մասնագիտական օտար լեզվի դասավանդման մեթոդաբանական հիմնական գործիք հիմք ընդունելով մասնագիտական տեքստերը՝ հոդվածում փորձ է արվում ներկայացնելու դրա մատուցման, ընկալման, վերլուծության, մտապահման և այլ աշխատանքներ իրականացնելու համար ժամանակակից մոտեցումները, որոնք, բացի բուն նպատակից՝ մասնագիտական օտար լեզուն սովորելուց, ուսանողին տալիս են հեղափոխում մասնագիտական գործունեություն իրականացնելու մի շարք կարևոր հմտություններ և ունակություններ:

Հարկ է նաև նշել, որ ուսումնասիրությունում առաջարկվող՝ տեքստերի վրա աշխատանքի նոր մոտեցումները կարևոր են մրցունակ մասնագետներ պատրաստելու հարցում և օգնում են ուսանողին՝ հեշտությամբ հաղթահարելու ինչպես միջազգային,

այնպես էլ տեղական մի շարք կազմակերպություններում աշխատանքի դիմելիս օտար լեզվի մակարդակի ստուգման հանձնարարությունները:

Հիմնականում հիշողության կարողությունների և մեխանիկական գործողությունների շնորհիվ օտարալեզու տեքստն ընկալելու, մտապահելու, նոր բառեր սովորելու, վերարտադրելու գործողություններին որպես այլընտրանք է առաջարկվում ուսանողի նյարդահոգեբանական, մասնավորապես՝ ճանաչողական այլ կենտրոնների ուղղությամբ աշխատելը՝ «կարդալ – թարգմանել – պատմել» ընդունված բանաձևի փոխարեն առաջարկելով այնպիսի մեթոդներ, ինչպիսիք են տեքստի ռազմավարական ընթերցումը, որը բաղկացած է ակտիվացում, ամփոփում, դիտարկում և պարզաբանում, տեղեկատվության վիզուալացում և կազմակերպում, որոնում և ընտրություն, հարցադրում, ենթադրությունների առաջաջում բաղադրիչներից, ինչպես գրավոր, այնպես էլ բանավոր տեքստից հիմնական իմաստային միջուկի զատումը, վերլուծումը և տարբեր տեքստերի համադրումը (սինթեզում) մեկ տեքստում:

Հիմնաբառեր. մասնագիտական տեքստ, ռազմավարական ընթերցում, վերլուծում, համադրում, ճանաչողական հոգեբանություն

JEL: D83, Z00

DOI: 10.52174/29538114_2023.1-138

Ներածություն: Բարձրագույն ուսումնական հաստատություններում մասնագիտական օտար լեզվի ուսուցման առանցքային գործիքներից է օտարալեզու մասնագիտական տեքստը:

Պետք է արձանագրենք, որ Հայաստանի Հանրապետությունում թե՛ միջնակարգ, թե՛ բարձրագույն կրթությունը չեն բավարարում տեքստերի վրա աշխատանք կատարելու ուսուցման արդի պահանջները: Օրինակ՝ Ֆրանսիայում արդեն բարձր դասարաններում աշակերտները սովորում են վերլուծական, փաստարկված տեքստեր կազմել, ծանոթանում են հրապարակախոսական ոճին:

Առանձնակի ուշադրության է արժանի ապագա տնտեսագետների ուսուցման ծրագրում տեքստերի վրա աշխատանքի կարևորումը: Այսպես՝ Փարիզի առևտրի բարձրագույն դպրոցում (ESCP), ինչպես նաև Փարիզի կառավարման բարձրագույն ինստիտուտում (ISG) ուսանողները ստուգաբար են հանձնում «Տեքստերի համադրում» կամ «Տեքստերի ուսումնասիրություն և համադրում» առարկայից:

Մեր իրականությունում ուսանողը փորձում է տեքստի վրա աշխատել այնպես, ինչպես պահանջվել է դպրոցում՝ կիրառելով հմտություններ, որոնց արդեն իսկ ծանոթ է, սակայն դպրոցական ծրագրով օտար լեզվի ոլորտում կատարվող աշխատանքը հիմնականում սահմանափակվում է «կարդալ-թարգմանել-պատմել-պատասխանել հարցերին» բանաձևով:

Ժամանակակից աշխարհում դժվար է որոշել՝ ուսանողն ինքնուրույն է թարգմանել տեքստը, թե՞ թարգմանչական ծրագրի օգնությամբ: Մեկ այլ՝ դպրոցական տարիներից ժառանգած միտում է տեքստը վերարտադրելիս անգիր ասելը: Բավական է փոխել մի քանի բառ և հարց ուղղել ուսանողին, նա կդժվարանա պատասխանել հարցին, թեպետ ընդհանուր առաջ այդ պատասխանն ասել է անգիր արված այլ բառերով: Այսինքն՝ լուրջ խնդրի ենք բախվում նյութի ընկալման հետ կապված, ինչն էլ նոր մոտեցումների, դասավանդման նոր մեթոդների կիրառման անհրաժեշտություն է առաջացնում:

Գրականության ակնարկ: Մասնագիտական տեքստի ընկալման նոր մոտեցումը սկսվում է հենց տեքստը ճիշտ ընթերցելու եղանակից, որը չի նշանակում բառերը, նախադասությունները ճիշտ և սահուն կարդալը միայն: Խոսքը լեզուների դասավանդման մեթոդաբանության այնպիսի ժամանակակից մոտեցման մասին է, ինչպիսին «ռազմավարական ընթերցումն է» (strategic reading):

Այս մոտեցման ուսումնասիրությամբ և գիտական աշխատություններով են հանդես եկել լեզվի դասավանդման մեթոդաբանության մի շարք մասնագետներ՝ Սան Ֆրանցիսկոյի համալսարանի պրոֆեսոր Հենրի Դուգլաս Բրաունը¹⁷⁸, Ավստրալիայի գիտությունների ուսումնասիրության և մանկավարժության պրոֆեսոր Քեյթի Միլսը¹⁷⁹, Կոլումբիայի համալսարանի փորձագետ Ջենիֆեր Սերավալոն¹⁸⁰, մանկավարժ, կրթության խորհրդատու Թենի Մաք-Գրեգորը¹⁸¹:

Արդյունավետ ընթերցանության դասավանդմանը հոգեբանական տեսանկյունից են անդրադարձել նաև Մարիանա Վոլֆը¹⁸², Դանիել Վիլինգհեմը¹⁸³:

Հետաքրքրական է ճանաչողական հոգեբանության տեսանկյունից նոր տեքստերի ընկալման յուրահատկություններին ծանոթանալ հոգեբան Ֆերիս Ջաբրի¹⁸⁴ գիտական հոդվածով, որտեղ շեշտը դրվում է մարդկային ուղեղի կողմից տեղեկատվության ընթերցման, յուրացման և մտապահման վրա: Հեղինակը բացատրում է, թե թղթի վրա տպագրված և համակարգչի կամ հեռախոսի էկրանին ընթերցած նույն տեքստերն ընկալման ու հատկապես երկարաժամկետ մտապահման առումով ինչպես են տարբերվում միմյանցից: Այս ուսումնասիրությունները հատկապես կարևոր են՝ հաշվի առնելով ուսանողների՝ էկրանը թղթից նախընտրելու միտումը:

Հեղինակը ներկայացնում է Լեյչեստերի համալսարանի հոգեբան Քեյթ Գարլանդի և նրա գործընկերների կատարած գիտափորձի արդյունքները, ըստ որոնց՝ ուսանողների այն խումբը, որին տրվել է թղթի վրա տպագրված տեքստ, շատ ավելի լավ է հասկացել նյութը և մտապահել այն, քան փորձարարական խմբի մասնակից մյուս ուսանողները, որոնք նույն տեքստը կարդացել են էկրանին: Վերջիններս նաև ավելի հաճախ են կարիք ունեցել կրկին տեսնելու տեքստը, որպեսզի մտաբերեն գրվածը: Ըստ հեղինակի՝ առաջին խումբը փորձել է հասկանալ, երկրորդը՝ մտապահել¹⁸⁵:

Տեքստերի ընկալման, սեփական տեքստերի շարադրման, ինչպես նաև տեքստերի համադրման եղանակներին է ծանոթացնում Տատյանա Բիրյուկովայի «Տեքստի վերլուծություն և համադրություն» գիտաուսումնական ձեռնարկը: Աշխատությունում ներկայացված են ինչպես լեզվական, այնպես էլ արտալեզվական գործոնները, մանրամասն մեկնաբանվում են տեքստերի ոճային առանձնահատկությունները:

¹⁷⁸ Brown H. D., Principles of Language Learning and Teaching, 2014, Teaching by Principles, 2015.

¹⁷⁹ Mills K. A., The Seven Habits of Highly Effective Readers, 2008.

¹⁸⁰ Serravallo J., The Reading Strategies Book, 2015.

¹⁸¹ McGregor T., Comprehension Connections, 2007.

¹⁸² Wolf M., Reader Come Home: The Reading Brain in a Digital World, 2018.

¹⁸³ Willingham D. T., A Cognitive Approach to Understanding How the Mind Reads, 2017.

¹⁸⁴ Jabr F., The Reading Brain In the Digital Age: The Science of Paper Versus Screens.

¹⁸⁵ St'u The reading brain in the digital age: The science of paper versus screens,

<https://www.scientificamerican.com/article/reading-paper-screens/>

Սույն հոդվածում ավելի մանրամասն ներկայացվում են ռազմավարական ընթերցման ոլորտի առաջատարներից Հելեն Մաք-Էվանի «Բարձր արդյունավետությամբ ընթերցողների յոթ սովորույթները» աշխատությունում առկա մոտեցումները, որոնցից են ակտիվացումը, ամփոփումը, դիտարկումն ու պարզաբանումը, վիզուալացումը և կազմակերպումը, որոնումն ու ընտրությունը, հարցադրումը, ինչպես նաև ենթադրությունների առաջադրումը: Հեղինակը որպես երեք հիմնական նպատակներ է նշում բառապաշարի հարստացումը, լեզվական սահունության զարգացումը և տվյալ ոլորտում գիտելիքների ձեռքբերումը:

Հելեն Մաք-Էվանի յոթ սկզբունքներին է իր «Բարձր արդյունավետությամբ ընթերցողների յոթ սովորույթները» աշխատությունում անդրադառնում նաև պրոֆեսոր Քեյթի Միլսը: Հեղինակը պնդում է, որ տեքստի ընթերցումից հետո հարցերին պատասխանելը չի նպաստում ուսանողների՝ կարդացածը հասկանալու ունակության զարգացմանը: Նա շատ ավելի արդյունավետ է համարում տեքստի տարբեր հատվածների վերաբերյալ ինքնուրույն հարցադրումների կազմումը:

Ք. Միլսը կարևորում է նոր ստացած գիտելիքն արդեն իսկ ունեցածի հետ համադրելը, կապեր ստեղծելը: Դա կարող է լինել ինչպես նախկինում անցած որևէ նյութ, այնպես էլ ուսանողի անձնական փորձին առնչվող կամ, օրինակ, որևէ ֆիլմում տեսած նմանություն, ընդհանրություն:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության հիմքում տեքստի վրա աշխատանքի հիմնական՝ տարբեր հեղինակների ուսումնասիրություններում կարմիր գծով անցնող ժամանակակից նոր սկզբունքների՝ լսարանային պայմաններում կիրառման ձևերի վերհանումն է և բացատրությունը:

Նոր մեթոդները փորձարկվել են ՀՊՏՀ-ում՝ երեք տարվա ընթացքում, ֆրանսերեն ուսուցանվող տարբեր խմբերում, վերամշակվել, նոր տարրերով են լրացվել՝ հաշվի առնելով ուսանողների արձանագրած արդյունքները և ցուցաբերած հետաքրքրությունը: Հընթացս նաև վեր են հանվել այս կամ այն մեթոդի կիրառման բարդությունները: Մասնավորապես՝ հաշվի առնելով նույն խմբում ֆրանսերենի տարբեր մակարդակների իմացություն ունեցող ուսանողների գործոնը, հարկ է եղել խմբային աշխատանքը անհատականացնել՝ տարբեր ուսանողների տարբեր բարդության աշխատանքներ հանձնարարելով: Այսպես օրինակ՝ տեքստերի համադրումը և ինքնուրույն շարադրմամբ մեկ տեքստով ներկայացումը պահանջել է լեզվի իմացության շատ ավելի բարձր մակարդակ, քան, օրինակ, տեքստերի փնտրողական ընթերցումը կամ իմաստային միջուկի գտումը:

Որպես հետազոտության հիմնական գործիք օգտագործվել են մասնագիտական օտարալեզու տեքստեր ինչպես գրավոր, այնպես էլ ձայնային կամ տեսաձայնային ձևաչափերով:

Առանձին հետաքրքրություն է առաջացրել նույն խմբում տարբեր ֆակուլտետների ուսանողների ընդգրկվածության գործոնը՝ հաշվի առնելով տեքստերի նեղ մասնագիտական ոլորտները: Այսպես՝ «Հաշվապահական հաշվառում» ֆակուլտետի ուսանողն աշխատել է թե՛ իր բնագավառի մասնագիտական տեքստերով, թե՛, օրինակ, կառավարմանը կամ մարքեթինգին առնչվող նյութերով:

Արդյունքների համեմատության համար նույն տեքստը մի խումբն անցել է առաջարկվող արդի մեթոդների կիրառմամբ, մյուս խումբը դասական՝ «կարդալ - թարգմանել - վերարտադրել» բանաձևով:

Հետազոտության շրջանակում որպես գործիք ընտրվել են տարբեր ոճերի մասնագիտական՝ ակադեմիական, հանրագիտարանային, պաշտոնական՝ Ֆրանսիայի կառավարման մարմինների կայքերից վերցված հաշվետվություն և վիճակագրություն ներկայացնող տեքստեր, ինչպես նաև տնտեսական լրագրողական հոդվածներ, գիտահանրամատչելի նյութեր, այդ թվում՝ ձայնային և տեսաձայնային:

Որպես հիմնական գործիք, որտեղ ներառված են թե՛ մասնագիտական տեքստեր, թե՛ վերլուծության և ինքնուրույն ուսումնասիրությունների համար վարժություններ, հետազոտության վերջին մեկ տարվա ընթացքում՝ սկսած 2021 թ-ից, օգտագործվել է Ի. Աբգարյանի «Տնտեսագիտական ֆրանսերեն» ձեռնարկը¹⁸⁶: Նշենք, որ ձեռնարկը կազմվել է ՀՊՏՀ ուսանողների հետ երկու տարվա աշխատանքի արդյունքում՝ հաշվի առնելով ուսանողների ծանրաբեռնվածությունը, օտար լեզվին հատկացվող ժամերի քանակը, այս կամ այն տեքստի վրա աշխատելիս, վարժությունները կատարելիս ուսանողների ցուցաբերած հետաքրքրությունն ու վերջնական ընկալումը:

Վերլուծություն: Մասնագիտական օտար լեզվի իմացության հարցում կարևոր ցուցիչ է, թե որքանո՞վ է ուսանողը հասկանում բանավոր կամ գրավոր հաղորդագրությունը, մեր ուսումնասիրության առարկայի դեպքում՝ տեքստը:

Տեքստերն իրենց ոճաբանական առանձնահատկություններով շատ տարբեր կարող են լինել: Սակայն մասնագիտական օտար լեզու սովորելիս ուսանողները հիմնականում առնչվում են գիտակրթական, հանրագիտարանային, լրատվական մասնագիտական տեքստերին: «Գիտական և տեխնիկական գրականության հիմնական խնդիրն է հնարավորինս պարզ ու ճշգրիտ որոշակի տեղեկություններ փոխանցել ընթերցողին»¹⁸⁷: Նման տեքստերը չեն ծանրաբեռնում ուսանողին հեղինակային ոճի, գեղարվեստական արտահայտչական տարբեր միջոցների առկայությամբ, սակայն ապագա տնտեսագետներն առնչվում են մեկ այլ խնդրի՝ տերմինաբանական համակարգին:

«Տերմինաբանական համակարգն առանձնահատուկ է օբյեկտիվության և ճշգրտության իր ձգտումով, որն ընդհանուր լեզուն ի վիճակի չէ բավարարել»¹⁸⁸: Ուստի, ուսանողը զրկված է այնպիսի «օգնական» հասկացության օգտագործման հնարավորությունից, ինչպիսին է, օրինակ, հոմանիշային շարքից այլ բառի ընտրությունը, և պարտավոր է սովորել տվյալ՝ ճշգրիտ եզրույթը:

Ուսանողները մասնագիտական եզրույթներին ծանոթ չեն ոչ միայն օտար լեզվով, այլև հաճախ՝ մայրենիով, քանի որ մասնագիտական օտար լեզու անցնում են բուհի առաջին, երբեմն նաև երկրորդ կուրսում, երբ դեռ հնարավորություն չեն ունեցել ուսումնասիրելու նեղ մասնագիտական առարկաները: Խոսքը, բնականաբար, վերաբերում է բակալավրիատում օտար լեզվի ուսուց-

¹⁸⁶ Աբգարյան Ի.Վ., Տնտեսագիտական ֆրանսերեն, Եր., «Զանգակ», 2021:

¹⁸⁷ Пумпянский А.Л., Введение в практику перевода научной и технической литературы, М., 1965, с. 11.

¹⁸⁸ Балли Ш., Французская стилистика, М., 1965, с. 11.

մանը: Արդյունքում՝ հաճախ տնտեսագիտության այս կամ այն հասկացությա-
նը, երևոյթին սկզբում ծանոթանում են օտար լեզվով, ինչը դասավանդողից
ոչ միայն լեզվական, այլ նաև մատուցվող թեմայի վերաբերյալ գիտելիքներ է
պահանջում, քանի որ անհնարին է բացատրել, հետո նաև ստուգել տեքստ,
որի իմաստն ընկալելի չէ:

Սակայն, եթե եզրույթների հարցում ուսանողը պարտավոր է հիշել և
գործածել օտարալեզու միակ ճիշտ համարժեքը, այլ մոտեցում է պահանջում
տեքստը վերարտադրելիս մյուս՝ եզրույթ չհանդիսացող բառերի ընտրությու-
նը: Անգիր արված շարահյուսական միավորների վերարտադրությունից ավելի
նախընտրելի է համարժեք այլ բառերով տեքստի իմաստային բովանդակու-
թյան շարադրումը, ինչն ինքնին ցուցիչ է, որ ուսանողը հասկացել է տեքստի
իմաստը և ներկայացնում է այն, այլ ոչ թե մեքենայորեն վերարտադրում ան-
գիր արված բառերը, նախադասությունները:

Միևնույն ժամանակ, եթե նախադասության մեջ գործածվում են կարևոր
բառակապակցություններ կամ այլ՝ նոր լեզվական կառույցներ, որոնք, ցան-
կալի է, ուսանողը սովորի, դասախոսը նոր տեքստի նախապատրաստական
աշխատանքներում կարող է ընդգծել դրանք՝ հատուկ գրավելով ուսանողների
ուշադրությունը:

Մասնագիտական օտարալեզու տեքստի իմաստն ըմբռնելու համար հա-
ճախ ուսանողներին հանձնարարվում է տեքստը թարգմանել, երբեմն նաև
պահանջ է դրվում դա անել բառացի: Մեր ուսումնասիրությունը, սակայն, ցույց
է տալիս, որ մեկ-երկու անկարևոր բառի հայերեն համարժեքի որոնումը կա-
րող է լուրջ խոչընդոտ դառնալ, շատ ժամանակ պահանջել ուսանողից և խան-
գարել պարբերության իմաստն ավելի հեշտ ընկալելուն: Բառից կառչելիս
ուսանողը երբեմն տեսադաշտից կորցնում է համատեքստը, չի փորձում հաս-
կանալ տվյալ պարբերության իմաստը՝ օգտվելով մյուս լեզվական միավոր-
ների հուշումից: Իսկ համակարգչային ծրագրերի միջոցով արված թարգմա-
նություններն էլ ավելի են հեռացնում ուսանողին իմաստային հիմնական թելե-
րը ինքնուրույն որոնելու գործընթացից: Այդպիսով՝ նա նաև ավելի վատ է յու-
րացնում հանդիպած նոր բառը կամ այլ իմաստային միավոր:

Բացի այդ, թարգմանությունը թույլ չի տալիս լիարժեքորեն պատկերա-
ցում կազմել, թե որքանո՞վ է ուսանողն ընկալել տեքստի իմաստը, որքանո՞վ
է կարողանում տարբերել միջուկը երկրորդական իմաստային բովանդակու-
թյունից: Ուստի, տեքստի թարգմանության առումով նախընտրելի են այլ՝ ժա-
մանակակից մեթոդներ, որոնք կներկայացնենք ստորև:

Ռազմավարական ընթերցում: Հաջողակ ընթերցողը ռազմավարու-
թյամբ ընթերցողն է (*Successful readers are strategic readers*)¹⁸⁹:

Ռազմավարական ընթերցումը միտված է ընթերցած նյութի իմաստի բա-
ցահայտմանը, ընկալմանը: Դա ինքնին նպաստում է այնպիսի կարևոր հմտու-
թյան զարգացմանը, ինչպիսին, մեր պարագայում, օտարալեզու մասնագի-
տական տեքստի իմաստի ընկալումն է, ինչն էլ իր հերթին օգնում է այլ հմտու-
թյունների հղկմանը՝ տեքստի մտապահում, վերարտադրություն և վերլուծու-
թյուն: Ուստի, օտարալեզու մասնագիտական ռազմավարական ընթերցման
մասին խոսելիս, զուտ լեզվական մարտահրավերներից բացի, գործ ունենք

¹⁸⁹ Տե՛ս **Drawhorn O.**, Teresa Perrin, *Essential reading skills*, London, 2013, էջ 3:

նաև ճանաչողական հոգեբանական (*cognitive psychology*) խնդիրների հետ, որոնց հաղթահարման համար հատուկ մոտեցումներ են պետք: Այլ կերպ ասած՝ անհրաժեշտ է ուսանողին ոչ միայն փոխանցել լեզվական կառույցներ, այլ նաև անձանոթ տեքստի ընթերցման պարագայում աշխատել մի շարք ճանաչողական գործընթացների հղկման ուղղությամբ, որոնցից են հիշողությունը, ուշադրությունը, տրամաբանական դատողությունը և այլն:

Ռազմավարական ընթերցման ոլորտի առաջատարներից կրթական խորհրդատու, տասնյակ աշխատությունների հեղինակ Հելեն Մաք-Էվանն իր «Արդյունավետ ընթերցողների 7 ռազմավարություններ» աշխատությունում տարբեր ժամանակներում տարբեր հեղինակների կողմից առաջարկված ընթերցանության մոտեցումներից առանձնացնում է հետևյալ ռազմավարությունները՝ ակտիվացում (*activating*), ամփոփում (*summarizing*), դիտարկում և պարզաբանում (*monitoring and clarifying*), վիզուալացում և կազմակերպում (*visualizing and organizing*), որոնում և ընտրություն (*searching and selecting*), հարցադրում (*questioning*), ենթադրությունների առաջադրում (*inferring*)¹⁹⁰:

- **Ակտիվացում (*activating*)**. ուսանողները, նախքան նոր տեքստին ծանոթանալը, ներկայացնում են թեմայի շուրջ իրենց արդեն իսկ իմացածը, կարդացածը, պատկերացումները: Այլ կերպ ասած՝ թեմայի շուրջ մտազրոհ է (*brainstorming*) կազմակերպվում:

Դասախոսը կարող է հանդես գալ որպես մոդերատոր, որը յուրաքանչյուր ուսանողին հնարավորություն կտա արտահայտելու իր պատկերացումները թեմայի շուրջ, միևնույն ժամանակ, կուղղի, եթե թյուր տեղեկատվություն է ներկայացնում ուսանողը, և կտա հավելյալ տեղեկություններ, կրեթի օրինակներ:

Օրինակ՝ եթե տեքստը ձեռնարկության ճգնաժամի տեսակների և փուլերի մասին է, կարելի է ուսանողներին հարցնել, թե ինչպես են պատկերացնում ձեռնարկության ճգնաժամը, արդյո՞ք հնարավոր է դա կանխատեսել, ի՞նչ փուլեր կարող է ունենալ ճգնաժամը, ի՞նչ միջոցների պետք է դիմել: Կարելի է նաև փորձել մտաբերել հայտնի ընկերությունների հետ կապված ճգնաժամային պատմություններ:

Հաշվի առնելով, որ իրենց պատկերացումներն օտար լեզվով արտահայտելու համար ուսանողները կարող են առնչվել թեմային վերաբերող օտարալեզու եզրույթների չիմացության խնդրին, հենց այս փուլում էլ կարելի է ներկայացնել օտար լեզվով բանալի-եզրույթները, բայց ոչ անջատ, այլ հենց ուսանողների մտքերի ձևակերպմանն օգնելիս և լրացուցիչ տեղեկատվություն ուսանողներին մատուցելիս:

- **Ամփոփ ներկայացում (*summarizing*)**. տեքստի առաջին ընթերցումից հետո ուսանողները փորձում են հակիրճ ձևակերպել, թե ինչի մասին էր տեքստը: Եվ, բնականաբար, այս փուլում ուսանողներն օգտագործում են նախորդ փուլում սովորած եզրույթները՝ միաժամանակ նպաստելով վերջիններին մտապահմանը:

Շատ կարևոր են նաև տեքստի առաջին և երկրորդ ընթերցման եղանակները, որոնք առանձին անդրադարձի կարիք ունեն:

¹⁹⁰ Տե՛ս **McEwan E.**, Seven Strategies of Highly Effective Readers, էջ 8, https://us.corwin.com/sites/default/files/upm-assets/6863_book_item_6863.pdf

Տեքստերի դասավանդման մեթոդաբանության ակնառու մասնագետ Դուգլաս Բրաունը իր «Դասավանդել սկզբունքներով» աշխատությունում նշում է «լուռ ընթերցանության» (silent reading) մի շարք ձևեր, որոնցից առանձնացնենք երկուսը՝ տեքստի արագ «թռուցիկ ընթերցանություն» (skimming) և տեքստի «փնտրողական ընթերցանություն» (scanning)¹⁹¹: Առաջին ընթերցման ժամանակ ուսանողն արագ աչքի է անցկացնում տեքստը, որպեսզի պատկերացում կազմի, թե ինչի մասին է այն, ինչ հիմնական ուղերձներ է պարունակում: Հենց այս եղանակն է կիրառվում լսարանում, որպեսզի ուսանողներն ամփոփ ներկայացնեն կարդացած տեքստը:

Իսկ հաջորդ փուլի՝ դիտարկման և պարզաբանման համար կիրառվում է երկրորդ՝ փնտրողական ընթերցանության եղանակը, երբ ուսանողը տեքստում որոնում է կարևոր տեղեկատվություն հաղորդող հատվածները, գուցե տարեթվեր, անուններ, տոկոսներ և ուշադրության արժանի այլ մանրամասներ, որոնք անհրաժեշտ է մտապահել: Այս փուլում ուսանողը իմաստային միջուկը տարանջատում է երկրորդական համարվող հատվածներից:

- **Դիտարկում և պարզաբանում (monitoring and clarifying)**. ուսանողները որոշում են, թե որքանով են հասկացել տեքստը, շտկումներ, լրացումներ անում առաջին ընթերցմամբ ձևավորված պատկերացումներում: Ամփոփ ներկայացված իմաստն արդեն դառնում է ավելի ընդարձակ՝ ներառելով կարևոր ուղերձները, ճշգրտող և հստակեցնող տեղեկատվությունը:

Իմբային աշխատանքում ուսանողները փորձում են լրացնել դասընկերոջ համառոտ ներկայացրածը՝ պարզաբանելով, թե ինչու է կարևոր ներառել նաև այս կամ այն նախադասությունը, որի բացակայության դեպքում թերի է լինում տեքստի ընդհանուր իմաստի ընկալումը: Նաև ճշգրտում դասընկերոջ՝ իրենց կարծիքով ոչ հստակ ներկայացված հատվածը:

- **Վիզուալացում և կազմակերպում (visualizing and organizing)**. տեքստի իմաստային հիմնական ուղերձը բացահայտելուց և հասկանալուց հետո դա մտապահելու և համակարգված ներկայացնելու անհրաժեշտություն է առաջանում, որն իրականացնելու համար ուսանողները կարող են տեքստի մտավոր պատկերներ ստեղծել, գրաֆիկական կամ այլ արտահայտիչ ձևեր ընտրել, կետերով հակիրճ շարադրել:

Մեր հետազոտության ընթացքում ուսանողները որպես մտապահման եղանակ օգտագործել են տեքստի կարևոր հատվածների գունավորումը, մի քանի կետերով համակարգված սղագրումը, աղյուսակի կազմումը, նաև՝ նյութի հիմնական իմաստը ներկայացնելիս իրենց խոսքը տեսաձայնագրելը, ապա՝ դիտելը:

- **Որոնում և ընտրություն (searching and selecting)**. նոր մասնագիտական հասկացություններին տեքստում ծանոթանալիս, թեմային առնչվող բանալի-եզրույթների հանդիպելիս ուսանողները լրացուցիչ տեղեկատվություն են որոնում վերջիններիս վերաբերյալ և սովորում տեղեկատվության մեծ հոսքից զատել, ընտրել կարևորը, հետաքրքիրը:

Այս մեթոդն ուսանողներին սովորեցնում է նաև աղբյուրներից գրագետ օգտվել՝ տարբերելով վստահելի անվստահելից, ծանոթացնում այն երկրնե-

¹⁹¹ Տե՛ս **Brown D.**, Teaching by principles, San Francisco, 2007, էջ 308:

րի պետական կառույցների, գիտահետազոտական ինստիտուտների, առաջատար՝ տնտեսագիտական ուղղվածությամբ պարբերականների կայքերին, որոնք մասնագիտական օտար լեզու սովորողների համար լրացուցիչ գործիք են դառնում՝ ինքնուրույն աշխատանքի համար:

Բացի այդ, տեղեկատվության վստահելի աղբյուրների որոնման և գրագետ ընտրության իմացությունն ուսանողին օգնում է նաև զեկույցներ, շնորհանդեսներ և նախագծեր պատրաստելիս, հարստացնում և բարձրացնում է իրազեկվածության աստիճանը:

- **Հարցադրում (questioning)**. ուսանողները ոչ թե պատասխանում են տեքստից հետո գրված հարցերին, ինչը օտար լեզվի տեքստի ուսուցման դասական եղանակներից է, այլ հակառակը՝ իրենք են հարցեր կազմում տվյալ տեքստի վերաբերյալ:

Այս եղանակն օգնում է բացահայտել տեքստի կարևոր ուղերձները, զատել տեքստի կմախքը, հիմնայուն հատվածները երկրորդական, ուղեկցող հատվածներից: Հետագայում ուսանողը հեշտությամբ է վերարտադրում տեքստի իմաստը՝ աչքի առաջ ունենալով իր իսկ կազմած հարցերը:

- **Ենթադրությունների, եզրակացությունների շարադրում (inferring)**. արդեն իսկ ըմբռնած, մտապահած և վերլուծած տեքստը լավ հիմք է, որ ուսանողները փորձեն սեփական վերլուծությունն անել թեմայի շուրջ, հանգել եզրակացությունների, տրամաբանել՝ հղում անելով տեքստի այս կամ այն հատվածին, օգտագործելով բանալի-բառապաշարը:

Ուսանողները, որպես հիմք ընդունելով սկզբնաղբյուր տեքստի գլխավոր թեման և կիրառված եզրույթները, նույն թեմայի շուրջ ինքնուրույն տեքստ են կազմում՝ օգտվելով նաև ազատ աղբյուրների այլ տեղեկատվությունից:

Օրինակ՝ եթե տեքստը Ֆրանսիայի տարբեր կառավարությունների օրոք մասնավորեցման կամ մասնավոր ձեռնարկությունների ազգայնացման մասին է, ուսանողը կարող է շարադրել, թե որ ժամանակահատվածում ինչպիսի տնտեսական քաղաքականություն է վարվել Հայաստանում:

Այս մեթոդը զարգացնում է նաև ուսանողի վերլուծական միտքը և նպաստում տեքստ կազմելու ճիշտ կառուցվածքի սերտմանը՝ նախաբան, թեմայի զարգացում, ամփոփում:

Տեքստերի համադրում (սինթեզ): Վերը նշված մեթոդներին զուգահեռ, տեքստերի համադրումը նույնպես օգնում է պարզել, թե որքանո՞վ է ուսանողն ըմբռնել այս կամ այն տեքստի իմաստը, որքանո՞վ է ընդունակ զատել կարևորը երկրորդականից, համադրել տարբեր աղբյուրների տեղեկատվությունն ու ի մի բերել մեկ տեքստում:

Այս մեթոդն արժանի է ավելի մանրամասն անդրադարձի, քանի որ Հայաստանի կրթական համակարգում այն դեռևս այնքան տարածված չէ, որքան արևմտյան զարգացած երկրներում, որտեղ տեքստերի համադրումը դասավանդվում է որպես առանձին առարկա: Ավելին՝ Հայաստանում ֆրանսիական ներկայության տարբեր կառույցներում և ձեռնարկություններում, որպես լեզվի տիրապետման ստուգման տարբերակներից մեկը, հենց տեքստերի համադրման ունակության գնահատումն է: Ուստի, ուսանողներն իրենց հետագա աշխատանքային գործունեության կազմակերպման համար կարող են առնչվել տեքստերի համադրման հմտության տիրապետման անհրաժեշտությանը:

Թենի Մաք-Գրեգորը «Ընկալման կապուղիներ. Ռազմավարական ընթերցման կամուրջները» աշխատությունում, ընդգծելով տեքստերի համադրման ընդունակության կարևորությունը, նշում է. «Ցանկացած գործում հաջողության հասնելը պահանջում է համադրելու ընդունակություն: Մտածելու այս ռազմավարության համապարփակ ուսուցանումը պատրաստում է մեր ուսանողներին իրենց ապագային՝ որտեղ էլ նրանք լինեն»¹⁹²:

Փորձենք հակիրճ ներկայացնել, թե ինչ է տեքստերի համադրումը: Օրինակ՝ նույն կամ հարակից թեմաների շուրջ ուսանողին առաջարկվում է երեք տարբեր տեքստ, որոնցից նա պետք է կազմի մեկ տեքստ՝ համադրելով կամ հակադրելով երեք տեքստերից ստացված տեղեկատվությունը:

Համադրած տեքստը պետք է բաղկացած լինի ներածությունից, թեմայի զարգացումից և ամփոփումից: Միևնույն ժամանակ, ուսանողը սահմանափակված է բառերի ընտրության քանակի մեջ, այսինքն՝ տեքստը չպետք է գերազանցի, օրինակ, 300 բառը, իրավունք չունի որևէ սուբյեկտիվ, իր կողմից միտք ավելացնել և պարտավոր է բաց չթողնել երեք տեքստերում առկա իմաստային բանալիներից որևէ մեկը: Արգելվում է նաև տեքստերից առանձին հատվածների, նախադասությունների արտատպումը: Շարադրանքը պետք է ամբողջովին ինքնուրույն լինի: Անհրաժեշտ է բացառել իմաստային խզումները՝ մի մտքից մեկ այլ մտքի, առանց կապակցման, անցումը:

Ուսանողը տվյալ հանձնարարությունը կատարելիս պետք է անցնի հետևյալ փուլերով.

- երեք տեքստերի ընթերցում, ընդհանուր իմաստի ըմբռնում,
- երկրորդ ընթերցմամբ բանալի բառերի, հիմնական միտքը փոխանցող հատվածների ընդգծում կամ գունավորում,
- երեք տեքստերում առանձնացված կարևոր, իմաստակիր հատվածների համադրում, հակադրում,
- համադրված տեքստի կազմում՝ հետևելով անհրաժեշտ կանոններին:

Այս մեթոդն օգնում է ուսանողին սովորել փոխադրել այլ հեղինակների կարծիքները, առաջ քաշած թեզերը, համադրել դրանք, գտնել ընդհանրություններ և տարակարծություններ, շարադրել այդ ամենը՝ միևնույն ժամանակ գերծ մնալով կողմնակալ դիտարկումներ անելուց:

Տեքստերի համադրման յուրացումը ուսանողին հետագայում կարող է օգնել հատկապես գիտական աշխատանքներ կատարելիս, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում զեկույցներ, հաշվետվություններ կազմելիս: Դա կարող է օգտակար լինել ոչ միայն ակադեմիական, լրատվական տեքստերի, այլ նաև փաստաթղթերի վրա աշխատելիս:

Տնտեսագիտական որևէ ոլորտին առնչվող փաստաթղթերը՝ զեկույցները, վիճակագրական տվյալները, օրենսդրական փոփոխությունները, կարող են ուսանողի կողմից կազմված նոր՝ համադրված տեքստի համար լավ «հումք» հանդիսանալ, որոնք փնտրելիս, ընթերցել ու հասկանալ սովորելիս, կազմության ձևին ծանոթանալիս նա միանգամից մի քանի օգտակար հմտություն է ձեռք բերում՝ անհրաժեշտ հետագա մասնագիտական գործունեությանը:

Նման փաստաթղթեր կարող են լինել մեկ կամ մի քանի երկրի կառավարությունների կողմից ընդունված որոշումները՝ ուղղված տնտեսության վրա,

¹⁹² McGregor T., Comprehension connections: bridges to strategic reading, 2007, p. 103.

օրինակ, COVID-19-ի ազդեցության հաղթահարմանը կամ դիսկային գոտում հայտնված ու տուժած ՓՄՁ-ներին օգնությանը: Ուսանողը դրանք ուսումնասիրելիս պետք է գտնի ընդհանրությունները, տարբերությունները, շարադրի դրանք՝ չմոռանալով կազմել ներածություն և վերջաբան:

Նշենք նաև, որ մասնագիտական օտար լեզվի դասավանդման համար տեքստերը, փաստաթղթերը կարող են լինել տարբեր լեզուներով, ինչը կգարգացնի նաև թարգմանական հմտությունը: Տեքստերի լեզվի ընտրությունը կարող է կախված լինել նաև ուսանողի՝ լեզվի տիրապետման մակարդակից: Այսպես՝ ոչ բարձր առաջադիմություն դրսևորող ուսանողը կարող է ծանոթանալ օտարալեզու տեքստերին և համադրել հայերեն տեքստով, լեզվի լավ իմացությամբ ուսանողը՝ հակառակը, կարող է երեք հայերեն տեքստից ստանալ մեկ ֆրանսերեն տեքստ: Հնարավոր է նաև, որ երեք տեքստից մեկը լինի հայերեն, երկուսը՝ օտար լեզվով կամ հակառակը: Տեքստերի, փաստաթղթերի բարդությունը, լեզվի և կատարվող աշխատանքի նրբությունները պետք է որոշի դասախոսը՝ ելնելով տվյալ խմբի և դրա առանձին անդամների լեզվական իմացության մակարդակից:

Տեքստերի համադրման ուսուցման նպատակն է ուսանողի մեջ զարգացնել փաստարկելու, կապակցված միտք արտահայտելու, համադրելու և հակադրելու, տարբեր մասերից մեկ՝ կապակցված և սահուն շարադրված ամբողջություն ստանալու ունակությունները: Եվ, իհարկե, տեքստերի համադրման համար ուսանողը նախևառաջ պետք է սովորի ճիշտ կարդալ և հասկանալ տեքստերից յուրաքանչյուրը, կարողանա զատել կարևորը երկրորդականից, գտնի բանալի հասկացություններն ու գաղափարները, ինչի մասին խոսել ենք վերևում՝ ռազմավարական ընթերցանության մոտեցումները ներկայացնելիս:

Եզրակացություններ: Մասնագիտական օտարալեզու անձանոթ տեքստի՝ արդի մեթոդների կիրառմամբ շուրջ երեք տարի տևած հետազոտությունն արձանագրել է մի շարք դրական արդյունքներ, կիրառման ընթացքում եղել են նաև բարդություններ:

- Ուսանողներից շատ ավելի քիչ ժամանակ է պահանջվում տանը նոր տեքստը սովորելիս, քանի որ արդեն իսկ լսարանում արվել է իմաստն ըմբռնելու նախապատրաստական աշխատանք: Նաև բացառվում է տեքստի իմաստը սխալ հասկանալը, ըստ այդմ՝ տեքստի հետ կապված հետագա աշխատանքները ձախողելը:
- Խմբերը, որտեղ նոր տեքստը մատուցվել է այս եղանակով, նշել են, որ տեքստը հեշտ է, իսկ որտեղ այս մեթոդները չեն կիրառվել, նույն տեքստը համարել են բարդ, որոշ ուսանողներ առանձին հատվածների իմաստը սխալ են ընկալել:
- Ռազմավարական ընթերցումն օգնում է նաև բանավոր խոսքի զարգացմանը: Ուսանողները շատ ավելի հեշտությամբ և, ինչը կարևոր է, անկաշկանդ են վերարտադրել տեքստը, քան այս մեթոդներով տեքստի վրա չաշխատածները, գրեթե կարիք չեն ունեցել տեքստին ևս մեկ անգամ անդրադառնալու, փնտրելու միտքը ձևակերպելու համար անհրաժեշտ բառեր, կապակցություններ: Մյուս խմբերի ուսանողները կառչել են տեքստի բառերից, փորձել անգիր վերարտադրել նախադասությունները

և կարիք են ունեցել, որ տեքստն աչքի առաջ լինի՝ պարբերաբար դրանից օգտվելու համար:

- Ձեռք բերված հմտությունները, ուսանողների փոխանցմամբ, օգնում են ավելի հեշտ սովորել օտարալեզու տեքստը, նաև այլ առարկաներ սովորելիս ըմբռնել տեքստերում պարունակվող տեղեկատվությունը, համակարգել, պատկերացնել, մտապահել և վերարտադրել:
- Ջարգանում է վերլուծելու ունակությունն ու խթանվում ինքնուրույն հետազոտություն անելու ցանկությունը: Նույն խմբում մի քանի տեքստ տարբեր մոտեցումներով մատուցելը ցույց է տվել, որ ուսանողները նախընտրում են անհատական վերլուծական աշխատանքը, ինչպես նաև շնորհանդեսի պատրաստումն այն թեմաներից, որոնց վերաբերող տեքստերն անցել են սույն հոդվածում բերված մեթոդներով:
- Գիտակցելով նոր տեքստին լսարանային պայմաններում ծանոթանալու առավելությունը՝ ուսանողները ձգտում են չբացակայել օտար լեզվի դասերից:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտ է նշել, որ տվյալ մեթոդների կիրառումը դասավանդողից պահանջում է վերակառուցել դասաժամի ընդունված կառուցվածքը, երբ լսարանում ավելի շատ ժամանակ է հատկացվում տնային աշխատանքի ստուգմանը: Կարիք է առաջանում դասաժամը բաշխել այնպես, որ նոր տեքստին ծանոթությունը հիմնականում կատարվի լսարանում, այլ ոչ՝ տանը: Այլ կերպ ասած՝ «տանը սովորել, լսարանում շտկել, հղկել» ոճը պետք է փոխարինվի «լսարանում սովորել, տանը հղկել, զարգացնել» ոճով:

Բացի այդ, տնային աշխատանքներն էլ իրենց բնույթով կարող են լինել ուսանողի հետ անհատապես աշխատելուն միտված՝ օգտագործելով համացանցի ընձեռած հնարավորությունները: Մասնավորապես՝ խոսքը վերաբերում է թեմային առնչվող վերլուծություններին, հետազոտություններին, որոնք ուսանողը կարող է ուղարկել դասախոսի էլեկտրոնային հասցեով և ստանալ կատարված աշխատանքի մասին դասախոսի կարծիքը, դիտարկումներն ու առաջարկությունները: Սկզբնական փուլում ուսանողները կարող են նաև դասախոսի հետ անհատապես աշխատել վիզուալացմանն ուղղված՝ իրենց կազմած գծապատկերների, աղյուսակների, այլ ձևերի վրա: Տեքստերի համադրումը թույլ է տալիս ավելի շատ անհատական աշխատել դասախոսի հետ՝ հնարավորություն տալով վերջինիս լսարանում ավելի շատ ժամանակ տրամադրել մյուս ուսանողներին:

Հարկ է նաև նշել, որ հոդվածում ներկայացված նոր մոտեցումները կիրառելիս սկզբնական շրջանում դասախոսից շատ ժամանակ է պահանջվում՝ ուսանողներին սովորեցնելու այդ մեթոդներով տեքստի վրա աշխատել, քանի որ, ցավոք, միջնակարգ դպրոցում այդպեղյակ աշխատել չեն սովորում: Ուստի շատ կարևոր է տեքստերի վրա աշխատանքի արդի մեթոդները սկսել կիրառել արդեն իսկ միջնակարգ կրթության օղակներում, ինչն էլ պահանջում է նոր կրթական ռազմավարություն:

Օգտագործված գրականություն

1. Արգարյան Ի.Վ., Տնտեսագիտական ֆրանսերեն, Եր., «Զանգակ», 2021:
2. Балли Ш., Французская стилистика. М., 1965.
3. Бирюкова Т., Елец, Анализ и синтез текста. Блец, 2007.
4. Пранцова Г., Романичева Е., Современные стратегии чтения: смысловое чтение и работа с текстом. М., 2017.
5. Пумпянский А.Л., Введение в практику перевода научной и технической литературы. М., 1965.
6. Douglas Brown H., Teaching by principles. San Francisco, 2007.
7. Drawhorn O., Perrin T., Essential reading skills. London, 2013.
8. Mills Kathy A., The seven habits of highly effective readers. Adelaide, 2008.
9. Larsen-Freeman D., Technics and principles in language teaching. Oxford, 2011.
10. McGregor T., Comprehension connections: bridges to strategic reading. Portsmouth, 2022.
11. Morfaux L.- M., Résumé et synthèse des textes: méthode et exercices corrigés. Paris, 2004.
12. Serravallo J., *The Reading Strategies book*. Portsmouth, 2015.
13. Stalloni Y., La synthèse de textes : Méthodes, exercices, épreuves : concours d'entrée aux Grandes écoles. Paris, 1999.
14. Willingham D.T., *A Cognitive Approach to Understanding How the Mind Reads*. San Francisco, 2017.
15. Wolf M., *Reader Come home: The reading Brain in a Digital World*. Johannesburg, 2018.
16. Ferris J., The reading brain in the digital age: The science of paper versus screens,
<https://www.scientificamerican.com/article/reading-paper-screens/>
17. Interlettre.com (Langue, culture, méthode),
<https://interlettre.com/128-synthese-de-textes/428-la-methode-de-la-synthese-de-textes>
18. McEwan E. K., Seven Strategies of Highly Effective Readers,
https://us.corwin.com/sites/default/files/upm-assets/6863_book_item_6863.pdf

ИЗАБЕЛЛА АБГАРЯН

Ассистент кафедры языков АГЭУ

Современные подходы в работе над профессиональными иноязычными текстами в группах лингвистических специальностей.– Принимая профессиональный текст в качестве основного учебно-методического инструмента в преподавании профессионального иностранного языка, в статье делается попытка представить современные подходы для передачи, восприятия, анализа, запоминания и других процессов, связанных с работой над текстом, которые помимо

основной цели – обучения профессионального иностранного языка, развивают у студентов ряд навыков и возможностей, необходимых в дальнейшей профессиональной деятельности.

Стоит отметить также важность прививаемых новых навыков не только в аспекте изучения иностранного профессионального языка, но и развития ряда важных способностей у студентов, которые помогут им в дальнейшем легче справиться с заданиями по выявлению уровня владения иностранным языком, как международных, так и некоторых местных работодателей.

В качестве альтернативы привычным методам, делающим упор в основном на память и ряд механических действий для восприятия, запоминания, воспроизведения иноязычного текста, обогащения словарного запаса, предлагающиеся подходы активируют ряд нейролингвистических особенностей студентов, в частности, центры когнитивного восприятия. Вместо стандартной схемы работы над текстами по формуле «читать – перевести – рассказать», предлагаются методы стратегического чтения, включая такие элементы, как активация, обобщение, мониторинг и уточнение, визуализация и организация, поиск и выбор информации, составление вопросов и выстраивание предположений, а также выявление смыслового ядра, анализ и синтез как письменных, так и устных текстов.

Ключевые слова: профессиональные тексты, стратегическое чтение, анализ, синтез, когнитивная психология

JEL: D83, Z00

DOI: 10.52174/29538114_2023.1-141

IZABELLA ABGARYAN

Assistant of Department of languages ASUE

Modern approaches to working with Professional Texts in Non-Linguistic Disciplinary Groups.– Taking a professional text as the main educational and methodological tool in teaching a foreign language for special purposes, the paper attempts to present modern approaches to the transmission, perception, analysis, memorization and other processes related to working with a text, which, in addition to the main goal of teaching a foreign language for special purposes, develop a number of skills and opportunities necessary for further professional activities.

It is not only in terms of learning a foreign professional language, but also in those of the development of a number of important skills in students that will help them in the future to more easily cope with tasks for identifying the level of foreign language proficiency, assigned by both international and some local employers.

As an alternative to usual methods, which mainly focus on memory and a number of mechanical actions for perception, memorization, reproduction of a foreign text, vocabulary enrichment, the proposed approaches activate a number of neurolinguistic features of students, in particular, centers of cognitive perception. Instead of the standard scheme of working with texts according to the “read-translate-retell” formula, strategic reading methods are proposed, including elements, such as activation, generalization, monitoring and clarification, visualization and organization, information search and selection, questioning and making assumptions, as well revealing the semantic core, analysis and synthesis of both written and oral texts.

Keywords: *professional text, strategic reading, analysis, synthesis, cognitive psychology*

JEL: D83, Z00

DOI: 10.52174/29538114_2023.1-141